Հավելված
ՀՀ վարչապետի 2013 թ.
նոյեմբերի 26-ի N 1087-Ն որոշման

Հաշվետվություն

Արսեն Սարոյանի՝ Ղազախստանի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը

Արսեն Սարոյան:

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետի տեղակալ:

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ալմաթի, Ղազախստանի Հանրապետություն, 2018թ. հունիսի 18-ից 21-ը:

4. Հրավիրող կողմը

Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն:

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի հատուկ նշանակության ուժերի կազմավորումների կազմում ընդգրկված ՀԱՊԿ անդամ-պետությունների արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ոլորտում իրավասու մարմինների ստորաբաժանումների հետ 2018 թվականի սեպտեմբերի 8-ից 11-ը անցկացվելիք հատուկ-տակտիկական ուսումնավարժության (այսուհետ՝ Ուսումնավարժություն) նախապատրաստման և անցկացման շտաբային բանակցություններին:

6. Քննարկված թեմաները

Քննարկվել են Ուսումնավարժության մտահղացման, գործնական միջոցառումների պլանի, ընդունող երկրի աջակցության վերաբերյալ հարցերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Շտաբային բանակցությունների ընթացքում իրականացվել են աշխատանքային խմբի հանդիպումներ և մեկնում Ուսումնավարժության անցկացման վայր՝ ՀԱՊԿ անդամ-պետությունների փրկարարական ստորաբաժանումների պատրաստության բազային զորավարժարան «Скальный город - Астана» (Ալմաթի մարզ, Կապշագայ քաղաք):

Քննարկվել են ճամբարային ավանում ընդունելու և կացության համար անհրաժեշտ միջոցներով ապահովելու հարցերը, Ուսումնավարժության օպերատիվ խմբի և գործնական միջոցառումների տեղամասերի ներգրավման ուժերի և միջոցների ձևաչափերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ընդհանուր լիագումար նիստից հետո ստորագրվեց՝ ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի հատուկ նշանակության ուժերի կազմավորումների կազմում ընդգրկված ՀԱՊԿ անդամ-պետությունների արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ոլորտում իրավասու մարմինների ստորաբաժանումների «Սկալա-2018» հատուկ-տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման շտաբային բանակցությունների արձանագրությունը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Ղազախստանի Հանրապետության ՆԳՆ արտակարգ իրավիճակների կոմիտե ներկայացնել.

- մինչև 2018 թվականի հունիսի 30-ը՝ առաջարկություններ Ուսումնավարժության մտահղացման, գործնական միջոցառումների պլանի, ակնկալվող ուժերի և միջոցների քանակի վերաբերյալ.

- մինչև 2018 թվականի հուլիսի 30-ը՝ տեղեկատվություն «Կազսպաս-2018» հավաք-սեմինարին մասնակցելու որոշման վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվել է Ուսումնավարժությանը ՀՀ ԱԻՆ կողմից մասնակցություն ցուցաբերել հետևյալ կազմով՝ օպերատիվ խումբ – 2 հոգի, փրկարարական խումբ՝ ալպինիստական գույքով – 13 հոգի:

10. Գործուղվողը

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետի տեղակալ, փ/ծ գնդապետ Արսեն Սարոյան:

11. Ստորագրությունը, ամսաթիվը

25.06.2018թ.